

Միաբանութիւնը սրտագինս կ'աղօթէր որ հայրենի երկիրը ննջէր ամքոյք եւ մնար Աստուծոյ պաշտպանութեան ու հովանատրութեան ներքոյ:

«Փրկեա զմեզ ի երոյն յաւիտենից, եւ քեզ փառք յաւիտեանս, ամէն»:

Յաւիտենական եալրը կը խորհրդանշէ հոգիի անվերջ տաճանքը: Եթէ արդար հոգիներուն համար Վերապահուած էր երանական տեսութիւն, ապա ամբարիչու հոգիներուն համար սահմանուած էր տառապալի Վիճակ, հոգեկան մշտական տուայտանք: Կորուսեալ ու լինալ հոգիները դատապարտուած էին գեենի կրակին, ուր անվերջօրեն պիտի կիզուէին ու չարշարուէին:

Աղօքքը Վերատին կ'աւարտի Տիրոջ անուան փառաբանութեամբ:

### ԶԵՆՈՐ ՔՀՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

#### ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԱՅԼ ՅԱՐԱՆՈՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուարկութիւն 35.— Ինչո՞ւ Ուղղափառ Եկեղեցին միև յարանուանութիւններու հաւատալիքներուն վրայ կը յարձակի:

Ընդհակառակը, նորարոյս յարանուանութիւններ կը յարձակին Հայ Եկեղեցիոյ քսան դարերու խորք ունեցող ուղղափառ վարդապետութիւններուն վը-րայ: Հայ Եկեղեցին ուրիշներու վրայ յարձակելու պէտքն անգամ չունի: Որովհետեւ, քրիստոնէական հաւատքի եւ կեանքի լիութիւնը գտած է Քրիստոսի մէջ: Եթէ հայ ազգի գաւակներ եւ այլ քրիստոն-եաներ հւոացած են այդ հաւատքէն եւ կեանքէն, Հայ Ֆէկեղեցին իր կոչումը կը նկատէ վերագարձի ճանապարհը ցոյց առաջ մոլորեալներուն: Այս սկզբ-րունքէն ալ մեկնած, Հայ Եկեղեցին միջ-Եկեղե-ցական շրջանակներու մէջ կը համագործակցի հա-ստքի հիմնական կէտերու մէջ համախոհութիւն ունեցող բոլոր քրիստոնէաններուն հետ:

#### ՆԱՐԵԿ ՎՐԴ. ԱԼԵՒՄԷԶԵԱՆ